ეროვნული ბიბლიოთეკა

11395 № 3903

№ 7 ՇԱԲԱԹ, 11 ՅՈՒՆՈՒԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՇԱԲԱԹ, 11 ՅՈՒՆՈՒԱՐԻ № 7

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամեն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ 70 ԿՈՊԷԿ

Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուով՝ տողատեղին առաջին երեսում 75 կոպ., իսկ վերջին երեսում՝ 50 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 15 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1919 թ.
ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ
ՕՐԱԹԵՐԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՑ ՆՈՐ, ՄԵԾԱՑՐԱԾ ԴԻՐՔՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

1 ամիս	10 ռուբ.
3 »	25 »
Հատավաճառ	70 կոպ։

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 25.

Գրասենեակը բաց է ամեն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 10—99.

ԽՆԴՐՈՒՄ

ենք „ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-ի իրեն բաժանորդներին, որոնց շարունակում ենք լրագիր ուղարկել, մինչև յունուարի 15-ը բաժանորդագինը վճարեն գրասենեակիս։ Վերոյիշեալ ժամանակից յետոյ, չվճարողներին կը դադարեցնի թերթ ուղարկելը։

0—3 „Ժողովրդի Ձայն"-ի գրասենեակ

Շաբաթ, յունուարի 11-ին
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 4-ԻՆ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹ. ԲԻՒՐՈՅՈՒՄ

(Головин. 25) կայանալու է Հայ Ժողովրդ. Կուսակցութեան անդամ և համակրող ուսանող-ուսանողուհիների կազմակերպչական ժողովը։ Բոլոր ընկերների ներկայութիւնն անհրաժեշտ է։

1—1 Նախաձեռնողներ

ԱԶԴ

Հայ Ժողովրդական Կուսակցութեան բոլոր անդամները յունուարի 2-ից հրաւիրւում են Կուսակցութեան բիւրոն (Головинскій пр. 25) ստանալու կուսակցական-անդամակցական վկայականներ 1919 թ. համար։ 10

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆՈՒԱՐԻ 12-ԻՆ
ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
Հ. ՅԵՂ. ԴԱՇՆԱԿ. ՎՐԱՍՏԱՆԻ ԿԵՆ. ԿՈՄԻՏԷԻ ՕՐԳԱՆ
„ՅԱՌԱՋ"-Ը

ԲԺԻՇԿ
ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Նախկին ասիստենտ Ժընևի համալսարանի կլինիկաների և պրոֆես. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։

ՆԵՐՔԻՆ և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւն. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՄԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏՐԻՊԵՐ և նրա կոմպլեկացիաները) և ԿԱՇՈՒԻ ցաւերի։

Ելեկտրաբուժական կաբինետ

Ընդունելութիւնն ամեն օր, առաւ. ժ. 10-ից 1-ը, երեկ. 4-ից 6-ը։ Կիրակի օրերը միմիայն ժ. 12-ից 1-ը, Կիրոչնայա, № 11։ 100—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(Նախկին Դավոս սանատորիայի ասիստենտ)։

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, Թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամեն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Ռտիշևսկայա 3, հեռ. 16—69։ ա. օ.) 100—49

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Նախկին ասիստենտ Բեռլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլեկտրօբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։ Ամեն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհբուտովսկայա փ., № 23։ Հեռ. 7—92։ 100—30

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Յեղափոխութիւնը Գերմանիայում։
Աղրբէջանի յայտագիրը Հայաստանին։
Հաշտարար պատուիրակութեան մեկնումը Պարիզ։
Հայ-վրացական կոնֆերանսի բացումը։
Զոհրաբեանի նամակը Ժորդանիային։
Արտաքսուած և ձերբակալուած հայերի վերադարձը։

ՆՈՐ ՎԻՀ ՉՓՈՐԵՆՔ

Շատ բաներ տեսանք ու շատ բան լսեցինք։

Այսքանն էլ բաւական է։

Բաւական էր հայ-վրացական այս եղբայրասպան ընդհարումը, որպէսզի դուրս ժայթքի այն բոլոր «կեղտն ու մուրը», այն բոլոր «ցաւն ու վէրքերը», որոնք կուտակուած են եղել մեր մէջ ռուսական տիրապետութեան օրերից։

Երկու եղբայր ազգերի մէջ եղած անբաւականութիւնների մէջ անշուշտ մեղսակից չէ ոչ վրաց դեմոկրատիան, ոչ հայ դեմոկրատիան, ոչ վրաց ժողովրդական մասսան, ոչ էլ՝ հայ ժողովրդական մասսան, այլ այն ազգայնամոլ տարրերը, որոնք Թիֆլիսում տիրող քաղաքական ու հասարակա-տնտեսական պայմաններից դժգոհ՝ պառակտման սերմերն են սերմանել երկու եղբայր ազգերի մէջ, կատարելով այդ սև գործը կամ անձնական հաշիւներից դրդուած, կամ իբրև վարձկան ագենտներ պետական «ախրանկայի» ձեռքում։

Դեմոկրատիան մեղսակից չէ այն պարզ պատճառով, որ նա նախաառաջ երկու ազգերի մէջ էլ ջանացել է կազմակերպել ժողովրդական բոլոր հոծ ուժերը ապազգային հողի վրայ և ապա, միացեալ ու համերաշխ, հանդէս գալ ընդդէմ բռնապետութեան։

Երկրորդը, որ նա մեր երկրում ձգտել է մեղմել ազգային անտագոնիզմը, մտցնելով իր շարքերի մէջ համերաշխութեան, եղբայրութեան և հաւասարութեան ոգին։

Այդ բոլորը մենք ընդունում ենք այն չափով, որ չափով դա վերաբերում է անցեալ օրերին, որ չափով դա վերաբերում է այն շրջանին, երբ վրաց ազգը տիրապետողի ու [illegible] դասի դերում [illegible]։

Սակայն այսօրուայ իրականութեան մէջ մենք բոլորովին այլ պատկեր ենք տեսնում, և այդ մեր տեսածը այնքան տարօրինակ է, այնքան բացասական, որ չենք կարող խորը դառնութեամբ չարձանագրել հրապարակօրէն։

Արդէն մի քանի ամիս է, որ վրացական որոշ խմբեր, որոնք առաջ էլ յայտնի էին իրենց շովէն գործունէութեամբ, անկախ Վրաստանի սահմաններում արտասովոր եռանդով սկսել են արշաւանք այլացեղ ազգերի դէմ, մանաւանդ հայերի դէմ։ Ամենայն անբարեացակամութեամբ պետական և հասարակական բոլոր հիմնարկութիւններից նրանց դրդումով դուրս են շպրտուած այլախոհները։ Անգամ Վրաստանի հպատակութեան պայմաններում գրուած, բայց ծագումով ոչ վրացի, քաղաքացիների ահագին մեծամասնութիւնը Թիֆլիսի նման մի մեծ քաղաքում, ուր իրենց թուով, իրենց հարստութեամբ, իրենց ստեղծագործութեամբ և շինարարութեամբ գերակշռող ձայն պիտի ունենային ոչ վրացիները, այլ հայերը, ներկայ հասարակապետութեան կարգերի միջոցին, դեմոկրատիայի տիրապետութեան օրօք, նրանք փաստօրէն զրկուած են քաղաքացիական տարրական իրաւունքներից ու մատնուած ամենատարբեր հալածանքների։

Այս օրերի համար մենք չենք կարող ասել, թէ վրաց յեղափոխական տարրերը մեղսակից չեն։ Որքան էլ ասելու լինեն այդ դեմոկրատիայի ներկայացուցիչները, թէ կռիւը Դաշնակցութեան դէմ է, այլ ոչ հայութեան, փաստերը գալիս են դաժանօրէն հաստատելու հակառակը։

Մեզ թոյլ ենք տալիս հարցնել.

Ի՞նչ մեղք ունի այն աշխատաւոր, խաղաղ ու ոչ ռազմունակ գիւղացութիւնը, որ պատերազմական շրջանի վայրերից խմբովին դուրս է վռնդւում և ծաղրի ու վիրաւորանքների ուղեկցութեամբ ուղարկւում Մետեխ, իսկ այնտեղից էլ առանց կօշիկների ու առանց վերարկուների քշւում դէպի կայարան՝ այս ձիւն ձմեռը Քութայիս ուղարկելու համար։

Միթէ դրանք «ռազմական գերիներ» են և միթէ իրաւունք ունին այդպէս վարուելու անգամ ռազմական գերիների հետ դեմոկրատական պետութեան մէջ։

Ի՞նչ մեղք ունի Թիֆլիսի հայութիւնը այն կռւում, որ հակառակ ազգերի ինքնորոշման վեհ սկզբունքի, ծագում է երկու հարևան պետութիւնների մէջ, այն էլ «դեմոկրատական-հանրապետութիւնների» կառավարութիւնների միջև սահմանային խնդիրների շուրջը։

Միթէ ում ձեռով նա խախտեց իր քաղաքացիական լոյալութիւնը, որ այսօր ռեալպատրիոտների քրքիջի ու ծափահարութեան տակ ստանում է մաղձ ու թոյն, հեգնանք ու հայհոյանք, որ ապրում է սարսափի կոշմարներ, որ զոհ է սանձարձակ ատելութեան, և մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող ամենացինիկ ստորացումների այն պաշտօնէութեան կողմից, որոնց կոչումն է՝ հասարակական կարգապահութեան վերահսկու լինել, պաշտպանել քաղաքացիների կեանքը, գոյքը, պատիւը և կատարել այն, ինչ որ թելադրում է օրինականութիւնը։

Թերևս հասկանալի փափկանկատութեամբ տանելի համարուէին սկսուած կալանաւորութիւնները պատերազմի գործողութիւնների դադարման միջոցին։ Բայց այժմ, երբ զինադադար է տիրում ռազմաճակատում, երբ սկսուած բանակցութիւնները յոյս են ներշնչում, թէ շուտով մարելու է հրդեհը ու վերսկսուելու եղբայրական փոխյարաբերութիւնները, ինչո՞ւ են վերսկսւում հալածանքները և մասսայական ձերբակալութիւնները աւելի մեծ թափով։

Թիֆլիսը յունուարի 5-ին աննկարագրելի պանիկայի մէջ էր։ Յատկապէս հայ ազգաբնակութեան համար ստեղծուած էր մի այնպիսի ծանր կացութիւն, որ ամեն մի անհատ իրաւունք ունէր մտածելու, թէ Վրաստանի հանրապետական կառավարութիւնը «օրէնքից դուրս» է յայտարարել հայութիւնը։

Առաւօտեան ժամը 10-ից սկսած, չորս ժամ շարունակ քաղաքի բոլոր թաղամասերը, սկսած գլխաւոր ու ամենաբանուկ փողոցներից մինչև ընկած մասերը, սկսած Երևանեան հրապարակից մինչև Հաւլաբարը, ենթակայ էին շուրջկալի (облава)։ Որսում էին բացառապէս հայ տղամարդկանց, սկսած 18 տարեկանից մինչև 45—50 տարեկանը, և խումբ-խումբ ուժեղ պահակների հսկողութեամբ քշւում դէպի Ներսիսեան դպրոցի նոր շէնքը։ Եռանդով գործում էր այդ օրը «յատուկ օտրեադը» և քաղաքային միլիցիան։ Այնտեղ հինգ հազարի չափ կալանաւորներ, ամեն հասակի ու դասակարգի, սկսած կապիտալիստից մինչև պրոլետարիատը, դեմոկրատից մինչև բուրժուան, նացիոնալիստից մինչև ինտերնացիոնալիստը, հասարակ թաքախաւորից, օրապահիկ մշակից մինչև պոդրյադչիկը ու արգանչչիկը, կուտակուել էին իրար վրայ, ինչպէս ձկները տակառում։ Մինչև անգամ չէին մոռացուած գրպանահատները. նրանք էլ էին գտել իրենց արժանաւայել տեղն ու պաշտօնը այդ հոծ բազմութեան մէջ։

Ու այդպէս նրանք շատ երկար, քաղցած ու ծարաւ, ենթակայ սարսափների, սպասում էին իրենց բաղդի տնօրինութեանը։ Մինչև ուշ գիշեր շատ աննշան տոկոս է արժանացել ուշադրութեան և շատ քչերն են բաղդ ունեցել տուն վերադառնալու. որովհետև «գիշերուայ ժամը 11-ից յետոյ արգելուած է փողոց դուրս գալը»։

Թէ ինչեր էին տեղի ունենում այդտեղ, այդ միայն ականատեսները գիտեն։ Եւ երևի մի օր մամուլը առիթ կունենայ պատկերացնելու իր էջերում։

Սակայն մենք իրաւունք ունենք ասելու, եթէ այդչափ ռազմական է ու սանձարձակ շովինիզմի տրամադրութիւնը այստեղ Վրաստանի մայրաքաղաքում, դեմոկրատական կառավարութեան անմիջական հսկողութեան տակ, Դաշնակից մեծ պետութիւնների լիազօրների ու զօրքերի ներկայութեամբ, օտար միսիաների աչքերի առաջ այն մարդկանց նկատմամբ, որոնք հե-

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 11 յունուարի

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, մօտենում է քաղաքային ընտրութիւնների վճռական օրը։ Ինքնավարութեան նախկին կազմի լիազօրութիւնները յունուարի մէկից վերջացած են համարւում, և փետրուարի 9-ին Թիֆլիսի հասարակութիւնը պիտի նորից մօտենայ ընտրական տուփերին և իր քուէն տայ իրաւասուների թեկնածուների նոր ցուցակներին։

Բնականաբար հարց է ծագում, արդեօք ներկայ քաղաքական խառնաշփոթ ու անբարեհաճ պայմաններում, երբ այնքան կարևոր է ունենալ քաղաքային ինքնավարութեան պատրաստուած և աշխատունակ մի կազմ, կարող են կատարուել քաղաքային ընտրութիւնները և արդեօք այդ ընտրութիւններից յետոյ կունենանք մենք մի այնպիսի դումա, որ փաստօրէն և իրաւաբանօրէն հանդէս գայ որպէս Թիֆլիսի ազգաբնակութեան բոլոր տարրերի և ազգութիւնների լիակատար ներկայացուցիչ։

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում հայ ազգաբնակութիւնը բռնում է շատ խոշոր տեղ, չնայած այն հանգամանքին, որ վերջին ժամանակներս վրաց հասարակութեան որոշ խաւերը ամեն կերպ աշխատում են նրան չէզոքացնելու։

Բացի այդ, յայտնի է և այն, որ հայ տարրը շատ առաջնակարգ դեր է խաղում Թիֆլիսի առևտրա-արդիւնաբերական կեանքում և միայն կամ համարեա թէ միայն նրա նախաձեռնութեամբ է աճում ու զարգանում Թիֆլիսի տնտեսական կեանքը։

Այս նկատառումները աչքի առաջ ունենալով, մենք կարևոր ենք համարում, որ առաջիկայ քաղաքային ընտրութիւնների ժամանակ հայ տարրը, հայ ազգաբնակութիւնը չէզոքացրած չլինի և գրաւի այն տեղը, որին արժանի է ամենայն իրաւամբ։ Նամանաւանդ որ քաղաքային ամեն տեսակ միանուագ և պարբերական տուրքերի ծանրութիւնը գլխաւորապէս ընկնում է հայ վաճառականութեան և առևտրա-արդիւնաբերական դասի վրայ։

Բայց վերջին շաբաթների ցաւալի դէպքերը, որոնք փաստօրէն ճնշել և օրէնքից դուրս են յայտարարել Թիֆլիսի հայութիւնը, առիթ են տալիս մեզ կարծելու, որ նա հնարաւորութիւն չպիտի ունենայ պատշաճ ծաւալով մասնակցելու առաջիկայ քաղաքային ընտրութիւններին, որովհետև թէ այն սիստեմը, որի հիման վրայ կազմւում են իրաւասուների ցուցակները և թէ այն սարսափն ու ահաբեկումը, որի մէջ ապրում է ներկայումս այստեղի հայութիւնը, ստեղծում են այնպիսի պայմաններ հայերի համար, որ նրանք գուցէ գերադասեն ամենևին չմասնակցել այդ ընտրութիւններին, քան մասնակցել այն ձևով, ինչ ձևով նրանց այժմ առաջարկւում է։

Եթէ մենք մի կողմ թողնենք նոյնիսկ [illegible] պատճառաբանութիւնները և այն ծանր կացութիւնը, որի մէջ գտնւում են այսօր Թիֆլիսի միանգամայն լոյեալ հայերը, և դառնանք հպատակութեան խնդրին, մենք կը տեսնենք նոյն անորոշութիւնը, որ մինչև այժմ չէ վերացուած։ Յայտնի է, որ ընտրութիւններին կարող են մասնակցել միայն վրացահպատակ-քաղաքացիները։ Բայց մինչև այսօր մենք չունենք հպատակութեան հարցի վերաբերեալ մի պարզ և որոշակի օրէնք, մինչև այսօր մենք չգիտենք վերջնականապէս, թէ Թիֆլիսի բնակիչներից որն է իսկական վրացահպատակ երևում կառավարութեան աչքում և որն օտարահպատակ։

Էլ չենք խօսում այն մասին, որ ներկայ պայմաններում, երբ այնքան կարևոր է քաղաքի բոլոր կարևոր ոյժերի և կամքերի միացումն և միահամուռ անդուլ աշխատանքը յօգուտ ընդհանուրի, հպատակութեան հարցը այնքան առաջնակարգ և ճնշող դեր խաղալ չի էլ կարող։

Ահա այն հանգամանքները, որոնք ստիպում են մեզ մտածել, որ քաղաքային ընտրութիւնները չեն տալ այն արդիւնքները, որ պիտի տային նորմալ և խաղաղ պայմաններում և նրանց արդիւնքները չեն ունենալ և այն հեղինակութիւնը հասարակութեան աչքում, որ կունենային եթէ ամեն ջանք գործ դրուէր ազգաբնակութեան բոլոր տարրերի քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու համար։

Եւ հենց այդ պատճառով մենք կարծում ենք, որ ընդհանուրի շահերն ի նկատի առնելով, կարևոր է յետաձգել քաղաքային ընտրութիւնները մինչև քաղաքական նորմալ կացութեան յաղթանակի օրը. իսկ այդ ժամանակամիջոցում մինչև ընտրութիւնները պիտի զբաղուել ընտրական ցուցակների պատշաճ կանոնաւորումով, որպէս զի այսուհետև մի անգամ ընդմիշտ և անդառնալի կերպով վերացուեն այն բոլոր ծանր պայմաններն ու խոչընդոտները, որոնք խախտում և վարկաբեկում են Թիֆլիսում բնակուող հայութեան քաղաքացիական պարզ և միանգամայն անվիճելի իրաւունքները։

Նոյն այդ պատճառով էլ մենք զարմանում ենք «Մշակ»-ի բռնած դիրքի վրայ, որ հնարաւոր է համարում կոչ անել հասարակութեանը այսպիսի աննպաստ պայմաններում մասնակցել ընտրութիւններին, քնացնելով հայ ժողովրդի վրդովուած խիղճը և դրանով ակնյայտնի վնաս հասցնելով հայ հասարակութեան շահերին։

ռուսը առընչութիւն անգամ չունին ռազմական գործողութիւնների հետ, նոյն իսկ այն մարդկանց, որոնց լոյեալութիւնը յայտնի է թէ Թիֆլիսի քաղաքագլխին, թէ տեղական վրաց հասարակական գործիչներին, և որոնց ոչ դաշնակցական լինելը, ոչ կուսակցական լինելը վեր է ամեն կասկածից, հապա պէտք է կարծել՝ թէ ինչպիսի մթնոլորտ էր ստեղծել այդ շովինիզմը «Грузія»-ի հայակեր պրովոկացիաների ազդեցութեան տակ այն «վիճելի» վայրերում, ուր ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը հայ էր, բայց ադմինիստրացիան ու միլիցիան վրացական, հապա չենք կարող չը հասկանալ այն յուսահատ պոռթկումը, որ վրաց զօրամասերի դէմ ստիպուած եղաւ հանել, եթէ չասենք Աղբուլախի, գոնէ Լոռու շրջանի, Բորչալուի գաւառի հայ ազգաբնակութիւնը, և պատճառ եղաւ [illegible] կռուի։

Այնուամենայնիւ, մենք զգում ենք, որ այսօր ժամանակը [illegible] դրանց պատճառների քննութեան մէջ մըտնել, սակայն կարող ենք և իրաւունք ունենք առանց վարանելու ասել, որ ոչ մի արդարացում չունի այն հայահալած քաղաքականութիւնը, որ սկսուած է ամիսներից ի վեր և այսօր դրակոնեան չափեր է ստացել պատերազմի շնորհիւ։ Եթէ կառավարութեան կը լինէր ազգայնամոլ տարրերի ձեռքում մեզ համար հասկանալի կը լինէր այսօրուայ ռեժիմը, բայց չէ՞ որ այդ ղեկը գտնւում է դեմոկրատիայի ձեռքում, և այն էլ այն դեմոկրատիայի, որն ընդգրկել է ինտերնացիոնալը։ Եւ երբ նրա տիրապետութեան սահմաններում ինտերնացիոնալի դրօշակն էլ չէ կարողանում հեռու պահել դեմոկրատիան այնպիսի շովինիստական արտայայտութիւններից, որպիսին յատուկ է ազգայնամոլ խաւերին, հապա ինչպէս կարող է յաջողութիւն գտնել ինտերնացիոնալը Հայաստանի իրականութեան մէջ։

Մեր կարծիքով Վրաստանի սոցիալիստական-դեմոկրատական կառավարութեան ամեն մի հակադեմոկրատական քայլը՝ ուղղուած ազգային փոքրամասնութիւնների դէմ, մանաւանդ այս վերջին օրերի ռեժիմը, իրեն լոյեալ պահող և պատերազմը չհամակրող հայ տարրերի դէմ, նախ և առաջ արուած է դեմոկրատիային։

Հայ դեմոկրատիայի ջանքերը Հայաստանի սահմաններում և առհասարակ հայութեան մէջ զսպելու շովէն ու ագրեսիւ տարրերը, և հող պատրաստելու դեմոկրատիայի ընդհանուր յաղթանակի համար, կարելի է ասել դեռ երկար ժամանակ դատապարտուած կը լինի կատարեալ անյաջողութեան։ Այդ տպաւորութիւնը թուլացնելու համար վրաց դեմոկրատիան պէտք է շտապի մղել իր գործակերպից այն զէնքերը, որոնք առնուած են ռուսա-պատրիոտների զինանոցից։

Ու [illegible] խնդիրներ են դրուած. դեմոկրատական ֆրոնտի ճեղքումը այդ լուրջ խնդիրները ի չիք կդարձնի դեմոկրատիայի տիրապետութեան ու յաղթանակի յոյսերի հետ միասին։ Քաղաքական աշխարհի բաղխումների անորոշ ելքը դեռ ևս անյայտ է մեզ համար և մեր ժողովուրդների վերջնական ճակատագիրը հազիւ թէ մեր ցանկութեամբ լուծեն։

Այսօր երկու պետութիւնների ներկայացուցիչները հանդիպում են իրար. պէտք է հաշտութեան մի ընդհանուր լեզու գտնեն և այնպէս լուծեն մեր ներքին վիճելի խնդիրները, որ հայ ու վրաց ժողովրդի մէջ այլևս չմնայ «քէն ու վրէժ»։ Փոխադարձ զիջումները մեզ հնարաւորութիւն կը տան լցնել մեր մէջ փորուած վիհը և ձեռք-ձեռքի տուած հանդէս գալ «աշխարհի» հզօրների առաջ, խաղաղաբար կոնգրեսի առաջ մեր քաղաքական պահանջներով։

Պատմական հազարամեակներ շղկապել են հայ ու վրացի ժողովուրդների բաղդը իրար հետ. միասին կրել ենք մոնղոլական լծի բոլոր դառնութիւնները, և թւում է մեզ, որ սերտ համերաշխութեամբ մենք պէտք է դիմաւորենք և ծագող արշալոյսը և երկու եղբայր ազգերի վերածնունդը։

Անյայտ

ՄԻ ՀԱՐՑ

Թիֆլիսի լրագիրներում տպագրուեց հետևեալ ուշագրաւ յայտարարութիւնը.

«Թիֆլիսի գեներալ-նահանգապետը յայտարարում է ամենքին, թէ չնայած որ ինքը մի քանի անգամ կարգադրել է՝ առանց իր օրդերի խուզարկութիւններ և ձերբակալութիւններ չկատարել, բայց ժողովրդական գւարդիայի շրջանային ըշտաբները ինքնագլուխ խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ են կատարում։ Այս առթիւ գեներալ-նահանգապետը յայտարարում է, որ առանց իր օրդերի ոչ ոք իրաւունք չունի խուզարկութիւններ կատարել և ձերբակալել քաղաքացիներին»։

Կուզէինք մի հարց տալ. Գեներալ-նահանգապետի այս կարգադրութիւնը պարտաւորեցուցի՞չ է ժողովրդական գւարդիայի շրջանային շտաբների համար, թէ ոչ։ Եթէ այո՛ ապա ինչո՞վ բացատրել այն երևոյթը, որ չնայելով արդէն մի քանի անգամ եղած կարգադրութեան՝ այդ շտաբները շարունակում են ինքնագլուխ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ կատարել։ Իսկ եթէ ոչ՝ ապա ինչի համար է տպուած այս յայտարարութիւնը։

Հետաքրքրական կը լինէր նոյնպէս իմանալ, թէ այդ շտաբները, որոնք հակառակ գեներալ-նահանգապետի քանիցս արած կարգադրութեան շարունակում են ինքնագլուխ ձերբակալութիւններ և խուզարկութիւններ կատարել՝ լուծուած են արդեօք և յանձնուած են դատի՝ ծանր ապօրինական գործողութիւններ կատարելու համար։ Եթէ այս բնական և անհրաժեշտ միջոցը չէ գործադրուած, ինչ երաշխաւորութիւն կայ, որ գեներալ-նահանգապետի այս կարգադրութիւնը նոյնպէս անհետեւանք չի մնայ՝ ինչպէս արդէն «մի քանի անգամ» եղած կարգադրութիւնները։

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ն. Ն. ԺՈՐԴԱՆԻԱՅԻՆ

Այս վերնագրով «Մշակի» № 5-ում կարդում ենք հետևեալ յօդուածը.

«Նոյ Նիկոլայեւիչ.

Այն դէպքերը, որոնք տեղի ունեցան Թիֆլիսի փողոցներում կիրակի, յունուարի 5-ին, այն աստիճան տգեղ էին և մղձաւանջային, որ ես թոյլ եմ տալիս ինձ ուղղել Ձեզ իմ ներկայ գրութիւնը։

Այդ դէպքերը այլ ևս չեն թողնում ոչ մի կասկած, որ Վրաստանի ներսում կատարեալ պատերազմ է յայտարարուած հայ ազգաբնակութեան, որպէս այդպիսին։

Քաղաքի բոլոր թաղամասերում տեղի էին ունենում շուրջկալներ ճիշտ այնպէս, ինչպէս մի ժամանակ սարքում էր միապետական կառավարութիւնը մեր վերաբերութեամբ՝ նոյն և իմ և Ձեր՝ կամ Ռուսաստանի բազմաթիւ քաղաքներում հրէաներին հալածելու համար։

Վաղ առաւօտեանից այդ համատարած շուրջկալներից և ոչ մէկից ազատ չէ թողնուած ոչ մի հայ։ Ամեն մի անցորդ հայի վրայ ուղղուած էր ատրճանակի խողովակը այս հարցով. «Դու հա՞յ ես»։ Եւ եթէ դժբախտ զոհերից որևէ մէկը չէր կարողանում ապացուցանել, որ նա չէ պատկանում այդ յանցաւոր ազգութեան, իսկոյն և եթ ուղարկւում էր բանտ։ Նոյն իսկ որոշ դէպքերում հարցրել են նաև դաւանութիւնը։ Բոլոր կալանաւորուած «յանցագործները» ուղարկւում էին հայկական սեմինարիայի շէնքը, որտեղ նրանք ամբողջ ժամանակ պիտի կանգնած մնային ձեռքները վեր բռնած։

Ձերբակալումները, ծաղրը, տանջանքները,—ահա ինչն էր թագաւորում այդ միջոցին ամբողջ քաղաքում, և դա այն մոմենտին, երբ Դուք, Նոյ Նիկոլայեւիչ, նստած էիք պալատի Սպիտակ դահլիճում դեմոկրատական պարլամենտի նիստին։

Ես թոյլ եմ տալիս ինձ վճռականօրէն պնդելու, որ նոյն իսկ ռուսական միապետութեան ամենամըռայլ շրջանում ոչ մի ազգութիւն չէ ենթարկուել այնպիսի հալածանքների ու դրգռումների, որպիսիք կրեցին հայերը Վրաստանի մայրաքաղաքում, որտեղ իբր թէ անխախտ են մնացել ռուսական յեղափոխութեան բոլոր նուաճումները, եթէ հաւատանք մի քանի ինքնագոհ մարդկանց պնդումներին...

Այդ վայրենի վակխանալիան տևեց առաւօտեանից մինչև 2 և կէս ժամը, երբ, պէտք է ենթադրել, վերջացած համարուեց քաղաքի «կարգը» պահպանողների «բանուորական» օրը։

Բայց, ի թիւս բազմաթիւ պարագաների, ինձ զբաղեցնում է առաւելապէս մի բան. ցերեկուայ ժ. 2-ին պարլամենտի հայ անդամները ուղարկեցին Ձեզ մի նամակ, որի մէջ խնդրում են բացատրել, թէ ինչ է նշանակում այդ ամբողջ վակխանալիան։ Դուք, Նոյ Նիկոլայեւիչ, բարեհաճեցիք վրդովուել և պատասխանել, որ կարգադրութիւն էք անում վերջ տալ այդ այլանդակութիւններին։

Ձեր պատասխանից պարզւում է, որ Դուք բոլորովին տեղեակ չէք այն բոլորին, ինչ կատարւում էր պալատի շուրջը, Երևանեան հրապարակի վրայ, թէև այդ, ինչպէս Դուք հաճեցիք արտայայտուել, այլանդակութիւնները կատարւում էին վաղ առաւօտեանից։

Ես յօժարօրէն հաւատում եմ, որ Դուք տեղեակ չէիք, բայց այդ դէպքում հարց է ծագում՝ ո՞վ է արդեօք կառավարում Վրաստանը և նրա մայրաքաղաքը, կառավարութիւնը Ձեր գլխաւորութեամբ, թէ... ներքին գործերի մինիստրութեան կից գտնուող յատուկ պահնորդախումբը (особый отрядъ)։

Եթէ այդ բոլոր «այլանդակութիւնները» անպատասխանատու մարդկանց ձեռքերի գործ է, ապա հաւատացէք, Նոյ Նիկոլայեւիչ, որ թաղամասային կոմիսարները չէին ունենայ գրաւոր հրահանգ գեներալ-գուբերնատորի ստորագրութեամբ, որը կարդացողները մեզ հաղորդում են հետևեալը. «Հրամայւում է ձեզ ձերբակալել բոլոր հայերին ձեր ուչաստկայի, բացի պարլամենտի անդամներից»։ Հետևաբար բոլոր այս այլանդակութեան մէջ նկատւում է խիստ կազմակերպչականութիւն և այդպիսին կազմակերպող հեղինակութիւն։

Հենց առանց այդ դոկումենտների էլ արդէն պարզ է բոլորիս համար, որ միմիայն խիստ կենտրոնացուած կամայականութիւնը կարող է իրականացնել այդ վակխանալիան, սկսել և վերջացնել այդ գործը բոլոր քաղաքամասերում միաժամանակ։

Այո, այդ ձեռքը եղել է և նա ունի պաշտօնական բնոյթ, բայց և այնպէս ինձ անհանգստացնում է մի հարց—ո՞վ է կառավարում այս երկիրը և նրա մայրաքաղաքը։

Յունուարի 3-ին, ուրբաթ օրը, Թիֆլիսի հասարակութիւնը կարդաց լրագիրներում Ն. Վ. Ռամիշվիլիի պատասխանը Ս. Գ. Փիրումեանի ճառին, որ արտասանուեց պարլամենտում Ս. Գ. Փիրումեանի հարցապնդման առթիւ, որ արել էր հայերին ձերբակալելու համար։

Նա հաւատացրեց ուժեղ ծափահարութեան տակ, որ Վրաստանում չէ հետապնդւում և չի հետապնդուի ոչ մի ժողովուրդ։ Այդ հաւաստիացումները խաղաղացրին հայ ազգաբնակութեան, բայց յանկարծ այդ խօսքերին հետևեցին յունուարի 5-ի արարմունքները, որ ապացուցին այն պատկերը, որ Վրաստանի հայերը, իսկ մասնաւորապէս Թիֆլիսի հայերը, փաստօրէն գտնւում են օրէնքից դուրս։ Ես և Դուք, Ն. Նիկոլայեւիչ, լաւ գիտենք, որ կը գտնուեն «մեղմացուցիչ դէպք յանցանաց» յունուարի 5-ի հերոսների համար, որ կը հետևի կառավարական որևէ յայտարարութիւն, որ «Борьба» և «Էրթոբա» լրագիրները կը տան նշան՝ նորից վայնասուն բարձրացնելու և նոյն իսկ մեղադրելու հայերին նրա մէջ, որ նրանց ձերբակալում են, որ նրանց ծաղրաբանում էին և այլն։

Այդ բոլորը մենք լաւ գիտենք։

ՄԱՄՈՒԼ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս վերնագրի տակ «Грузія»-ն Բագւում հրատարակուող Հ. Ց. Դաշնակցութեան օրգան «Впередъ» լրագրի դեկտ. 31-ի համարից առաջ է բերում հետևեալ դատողութիւնները.

«Վրացիները անյաջողութիւններ են կրում պատերազմի դաշտում, բայց քաջօրէն կռւում են իրենց մայրաքաղաքում խաղաղ բնակիչների դէմ, գործադրելով հայերի վերաբերմամբ ամեն տեսակ ռեպրեսիաներ. առիթ են հնարել, պրովոկացիա են հնարել և յայտարարել թէ «հայերն ամեն տեղ գաղտնի զօրահաւաք են կատարում», թէ «զօրահաւաքը կատարւում էր Արամեանցի շէնքում, Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի սենեակներում», թէ «գաղտնի իբրև աջակիցներ հանդիսանում էին «Դաշնակցութեան» կուսակցութեան նշանաւոր գործիչները», այս հիման վրայ վճռել են հայկական հասարակայնութեան զինակոչի հասակ ունեցող բոլոր հպատակներին յայտարարել ռազմագերիներ և ուղարկել Քութայիս քաղաքը, իսկ «Դաշնակցութեան» կուսակցութեան ակտիւ գործիչներին, որոնք նպաստել են Հայաստանի զօրքերի հաւաքման, բանտարկութեան ենթարկել ընդհանուր հիմունքներով։

Իրենց քաղաքականութեան մէջ Նիկոլայեւեան ժանդարմներին ընդօրինակող վրաց սոցիալ-դեմոկրատների այս պրովոկացիոն հնարամտութիւնը ակներև է արդէն այն բանից, որ հայերը բոլորովին կարիք չունէին զօրահաւաք կատարելու Թիֆլիսում։ Մեր ստոյգ տեղեկութիւնների համաձայն, մեզ յայտնի է, որ հայկական զօրամասին յանձնարարուած էր արտաքսել վրաց զօրքերը վիճելի շրջաններից, որոնց բնակիչներն ամբողջովին հայ են, և կանգ առնել Խրամ գետի վրայ։ Հայերը կարիք չունէին նոր զօրահաւաքի (այն էլ Թիֆլիսում) այն պատճառով, որ Հայաստանի հասարակապետութիւնը երեք անգամ աւելի զօրք ունի, քան Վրաստանի հասարակապետութիւնը։

Վրաց շովինիստներն ի զուր են աղմուկ բարձրացրել և երևակայել, թէ ահա հայկական զօրքերը ներս կխուժեն Թիֆլիս և Թիֆլիսի հայերը կը միանան հայկական զօրքերի հետ։

Հայկական քաղաքականութեան ղեկավարներն աւելի խոհեմ գտնուեցին, քան կարծում էին ուրիշները։ Հայկական զօրքերի համար դժուար չէր Թիֆլիսը գրաւել, [illegible] էր պէտք [illegible] Թիֆլիսի [illegible] յերը և թէ վրացիները քիչ զոհեր չէին տալ, բայց հաւանաբար կըյաղթէր մի երրորդ, չէզոք ոյժը առանց որևէ զոհողութեան։

Նոյնիսկ պատերազմական գործողութիւնների ժամանակ հայ և վրացի հասարակ ժողովրդի յարաբերութիւնների մէջ, հայ-վրացական ռազմաճակատից եկող ակտիւ մասնակցողների պատմածների համաձայն, սուր թշնամութիւն չի նկատւում. վերաբերմունքը դէպի գերի և վիրաւոր «թշնամիները» յաղթողների կողմից ամենաբարեկամական էր և սրտագին է։

Ուրախալի է, որ տաճիկ-գերմանացիների կողմից ճնշուած ինչ-որ հասարակապետութիւնների ինչ-որ սահմանների համար առաջ եկած շովինիստական զինուորութիւնը չի մտել ժողովրդի խորքը. այդ շովինիզմով բռնուած են միայն վրաց ազնուական արիստոկրատիայից դուրս եկած սոցիալ-պոլիտիկոսները և հրահրում են միջցեղային թշնամութեան կրքերը։

Բայց պատերազմական գործողութիւնները դադարեցրած են և երկու կուլտուրական ժողովուրդների առողջ զգացումը աւելի լաւ միջոցներ կգտնէր հանգիստ, բարի-հարևանական կեանքի համար»։

«Грузія»-ն ի հարկէ իր հանգի, անպատասխան չի թողնում դաշնակցական թերթի այս դատողութիւնները, որոնք չգիտենք թէ որքան հաւաստօրէն են առաջ բերուած վրաց շովինիստների թերթի մէջ, որովհետև դժուարանում ենք հաւատալ թէ Դաշնակցութեան օրգանը այդքան արհամարհանքով լինի խօսած ի միջի այլոց նաև Հայաստանի հասարակապետութեան մասին, այն հասարակապետութեան՝ որի կառավարութեան մէջ թէ նախագահի և թէ միւս պատասխանատու մինիստրների պորտֆելները այդ կուսակցութեան անդամների ձեռքին են այս րոպէին։ Եւ «Грузія»-ն դաշնակցական թերթի հենց այդ արհամարհական խօսքերի վրայ էլ ծանրանում է ասելով.

«Բայց դաշնակցական մտքի գլուխ-գործոցը հանդիսանում է նրանց այն յայտարարութիւնը, թէ «Վրաստանի եւ Հայաստանի տաճիկ-գերմանացիների կողմից ճնշուած ինչ-որ հասարակապետութիւններ են»։

Կարելի է արդեօք սրանից էլ առաջ գնալ ցինիզմը։ Մարդիկ չեն ուզում ճանաչել և իրենց անկախութիւնը. դաստիարակուած լինելով լաքէիզմի մէջ, նրանք ուզում են ստրուկներ թալ և, ի հարկէ, աշխատում են ստրկութեան մէջ դցել և իրենց հարևաններին:

«Սերունդները խայտառակութեան սիւնին կը գամեն՝ ազատութեան այդ դաւաճաններին և յաւիտենական անէծք կը կարդան այդ կայէններին»:

Ահա թէ ուր են տանում մեր տնարոյս սոցիալիստների անհեռատես քաղաքականութիւնից բղխող դատողութիւնները: Մոռանալով ամէն ինչ, նրանք հարուածում են շատ անգամ և այն, ինչ վաղուց ի վեր եղել է բոլորի, ի թիւս այլոց, և հայ ժողովրդի դարաւոր բաղձանքն ու երազը՝ քաղաքական լիակատար անկախութիւնը:

Եւ մոռանալով այս ամենատարրական ճշմարտութիւնները, նրանք առիթ են տալիս և օտարներին էլ մի աւելորդ քար նետել թէ հայ ժողովրդի և թէ Հայաստանի անկախութեան և Հանրապետութեան հասցէին:

Միթէ բաւական չէ:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԴՐԲԷՋԱՆԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

„Азербайджанъ" լրագրի յունուարի 7-ի համարում տպուած է հետևեալ յայտագիրը.

«Երևան, հայկական հասարակապետութեան արտաքին գործերի մինիստրին: Տեղեկութիւններ են ստացուած, որ Երևանի նահանգի մուսուլմանները բռնութիւնների են ենթարկւում հայկական բազմաթիւ զինուած ոյժերի կողմից, որոնք սպանում են, թալանում, զինաթափ են անում մուսուլմաններին գիւղերում ու քաղաքներում, բռնօրէն ստիպելով նրանց հնազանդուել իրենց: Խնդրում են օգնութիւն հայերի ճնշման դէմ: Տեղեկութիւնների համաձայն, հայերի հետապնդումից փախչելիս, Արաքսից անցնելու ժամանակ, միմիայն խեղդուած մուսուլմանների թիւը հասնում է երեք հարիւր հոգու: Յետոյ հաղորդագրութիւն կայ, որ վերջին ժամանակս հայկական կանոնաւոր զօրքերի կուտակում է նկատւում Ղազախի մօտ հայ գիւղերում, որպիսի գործողութիւնները հանդիսանում են Ադրբէջանի գերիշխանութեան խախտում: Իմ կառավարութիւնը յայտնելով բոլոր վերոյիշեալի մասին ի գիտութիւն Հայկական հասարակապետութեան կառավարութեան, բողոքում է նախ Երևանի նահանգի մուսուլմանների դէմ հայկական զօրքերի գործադրած բռնութիւնների, երկրորդ՝ այն բանի դէմ, որ այդ զօրքերը գրաւել են Երևանի նահանգի մուսուլմանաբնակ շրջանները, որոնք կազմում են Ադրբէջանեան հասարակապետութեան անխզելի մասը: Իմ կառավարութիւնը հաւատացած է, որ համապատասխան կարգադրութիւն կը լինի դադարեցնելու յետագայ բռնութիւններն ու գործողութիւնները, որոնք կարող են մթագնել երկու հարևան ու բարեկամ հասարակապետութիւնների յարաբերութիւնները:

Արտաքին գործերի մինիստրի փոխ. Ադիլ-խան Զիաթխանով:

—

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Պոլսից դեկտ. 22-ից հեռագրում են. Համաձայնութեան պետութիւնների իրազեկ շրջաններում հաղորդում են, որ հաշտութիւնը կը կնքուի աւելի վաղ, քան կարծում են, այն է՝ յունուարի վերջը: Վերսալի և Լոնդոնի կոնֆերանսները վճռել են բոլոր վիճելի խնդիրները և համաձայնութեան պետութիւնների հաշտութեան կոնգրեսում ուրիշ բան չի մնալ, քան եթէ միայն թելադրել հակառակ կողմին հաշտութեան պայմանները:

—

ՏՈՄՍՈՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Բագու քաղաքի Դաշնակից զօրքերի հրամանատար գեն. Տոմսոնը դեկտ. 28-ին հրատարակել է հետևեալ կոչը. «Նկատի ունենալով, որ կազմուած է Ադրբէջանեան կօալիցիոն կառավարութիւն Ֆ. Խ. Խոյսկու նախագահութեամբ, սրանով յայտարարում եմ, որ Դաշնակից հրամանատարութիւնը կատարեալ աջակցութիւն ցոյց կըտայ այդ կառավարութեանը, իբրև միակ տեղական օրինական կառավարութեանը Ադրբէջանի սահմաններում»:

—

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Յունուարի 9-ին Թիֆլիսից Բաթում մեկնեցին հայկական, վրաց և թուրքաց պատուիրակութիւնները: Բաթումից մեկնելու համար Դաշնակիցները յատկացրել են յատուկ նաւ:

—

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

Թիֆլիսի գերմանական ռադիօ-կայարանի վերջերս ստացած տեղեկութիւնների համաձայն, Լիբկնեխտի կուսակցութիւնը Բեռլինում յաղթել է. Լիբկնեխտը գրաւել է կայսերական պալատը: Նրա և հակառակորդների միջև յարաբերութիւնները լարւում են: Բուրժուական կազմակերպութիւնները հաւաքում են իրենց ոյժերը: Բոլոր չափաւոր և ազատամիտ տարրերը ինկերների հետ միասին այն տեսակէտն են պաշտպանում, թէ անհրաժեշտ է հրաւիրել Դաշնակիցներին Բեռլինը գրաւելու: Այս առթիւ համապատասխան շրջաններում փոխւում է դէպի ֆրանսիացիներն ու անգլիացիներն ունեցած վերաբերմունքը:

—

ԳԵՆ. ՖՈՐԵՍՏԻ ՈՒՕԿԵՐ

Բաթում-Թիֆլիսի շրջանի Դաշնակից զօրքերի հրամանատար անգլիական գեներալ Ֆորեստի Ուօկերը այս օրերս Թիֆլիսի վրայով մեկնեց Կարս:

—

ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հիւսիսային Կովկասից Թիֆլիս եկաւ լեռնականների կառավարութեան հաշտարար պատուիրակութիւնը Տաքաչերովի գլխաւորութեամբ: Պատուիրակութեան կազմի մէջ մտնում է ի միջի այլոց և Հայդարովը:

—

ՇՄԱԳԱՅԼՈՎԻ ՕԳՏԻՆ

Բագուի Սլաւեանօ—Ռուս Ընկերութեան Խորհուրդը յունուարի 3-ին դիմել է գեն. Տոմսոնին խնդրելով միջնորդել վրաց կառավարութեան առջև, որ Ջեգվիի կամրջի պայթեցման համար մահապատժի դատապարտուած ռուսական բանակի գնդապետ ինժեներ Շմագայլի մահավճիռը չգործադրուի:

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԱՅԱՐԱՆԸ ՊԱՅԹԵՑՐԱԾ

«Մշակ»-ին հաղորդում են, որ յունուարի 4-ին Ալեքսանդրապոլից անցնող տաճկական զօրամասերը պայթեցրել են Ալեքսանդրապոլի կայարանը: Պայթիւնի պատճառած զոհերի թիւը մեծ չէ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

(9 յուն.)

Սև ծովում

Ականների պատճառով Սև ծովում նաւագնացութիւնը դեռևս անվտանգ չէ: Սև ծովում փոխ-ծովակալ Ամետի հրամանատարութեան տակ գտնուած նաւերից մէկը «Միչման Հենրիխ» ականակիրը վնասուած էր լողացող ականի պայթիւնից յունուարի լոյս 1-ի գիշերը: Ֆրանսիական երկու նաւեր՝ «Բիսոն» և «Ալգեբարդ» և անգլիական «Ռուբին» նաւը իսկոյն օգնութեան գնացին նրան, բայց որովհետև «Միչման Հենրիխը» կարողացաւ իր սեփական միջոցներով շարունակել ճանապարհը, ժամանակ նաւերը հարկադրուած եղան միայն ուղեկցել նրան մինչև Պոլիս, ուր նա կը նորոգուի: Երեք նաւաստի պայթիւնից ծովը շպրտուեցին և խեղդուեցին, չորրորդը մեռաւ ըստացած ծանր վէրքերից:

ԲՈԼՇԵՒԻԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 3 յուն.—Հաղորդագրութիւն է ստացուած Սոֆիայում և Բուլգարիայի ուրիշ քաղաքներում ծագած խոշոր անկարգութիւնների մասին: Կարգը վերականգնելու համար ֆրանսիական զօրքեր են կանչուած:

—

Անցքեր Բեռլինում

ՆԱՈՒԷՆ, 8 յուն. — Կառավարական ռադիօն հաղորդում է, որ Բեռլինում Բրանդենբուրգեան դռներին, մեծ կայարաններին, մի քանի զօրանոցների և ոստիկանական վարչութեան շէնքերին տիրելու համար մինչև կէս գիշեր ուժեղ կռիւ էր տեղի ունենում առանց վճռական հետևանքի: Առաջին անգամ յեղափոխութեան սկզբից ի վեր կեանքի խանգարումը Բեռլինում այնպիսի չափերի է հասել, որ փողոցային կռիւները ծայր աստիճան լարուել էին: Սպանուածների և վիրաւորուածների թիւը մեծ է: Երկաթուղայինների և տրամուայների հաղորդակցութիւնը դեռևս վերականգնած չէ: Ուսանողներն իրենց ոյժերը տրամադրել են Էբերտի և Շայդեմանի կառավարութեանը:

ԲԵՐԼԻՆ, 9 յուն. — Շայդեմանի կառավարութիւնը մի կոչ է հրատարակել, հրաւիրելով բնակչութեանը՝ աջակցութիւն ցոյց տալ սպարտակեաններին ճնշելու համար:

ՆԱՈՒԷՆ, 8 յուն.— Բանակցութիւնները կառավարութեան և յեղափոխական խորհրդի միջև նորոգուեցին յունուարի 8-ին: Բանակցութիւններն այդ օրը ոչ մի հետևանք չունեցան: Յեղափոխական բանուորների ներկայացուցիչները մատնանշեցին կառավարութեանը որ երկաթուղային վարչութեան շէնքը վերցուած է զրահով կառավարական զօրքերի կողմից հակառակ այն խոստումին, թէ զինուած ոյժի չի դիմուիլ:

ԼԻՈՆ, 9 յուն.— Հաղորդում են, որ իրերի դրութիւնը Բեռլինում խիստ անորոշ է: Երեքշաբթի օրը փողոցներում շարունակւում էին կռիւները կառավարութեան կողմնակիցների և սպարտակեանների միջև: Բրակդորֆ Ռանցաուն և ժողովրդական լիազօրների խորհուրդը վճռել են ժամանակաւորապէս դադարեցնել արտաքին գործերի մինիստրութեան աշխատանքները:

Լեհացիները Արեւելեան Պրուսիայում

ԼԻՈՆ, 8 յուն.—Լեհացիները արևելեան Պրուսիայում գրաւեցին Գնեզնը: Գերմանական մի զօրամաս անաջող կերպով փորձեց յետ խլել քաղաքը:

—

Բուքովինայի կցումը Ռումանիային

Չերնովիցիում տեղի ունեցած բուքովինեան ռումանների կոնգրեսում Բուքովինան կցուած է յայտարարուած Ռումանիային:

—

Գերմանական գերագոյն հրամանատարութիւնը

ԲԵՐԼԻՆ 6 յուն.—Գերագոյն հրամանատարութիւնը չի հնազանդւում խորհուրդների համագումարի վճռին՝ իշխանութիւնը ժողովրդական լիազօրների ձեռքը յանձնելու մասին: Կառավարութիւնն անշուշտ վախենում է սուր բնոյթ տալ կոնֆլիկտին:

ՎՐԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՍԵՓ. ԹՂԹԱԿՑԻՑ

ԲԱԹՈՒՄ, 9 յուն. [illegible] շրջանը [illegible] դական Ռուսաց Ազգային Խորհրդի նախագահ Մասլովի ղեկավարութեամբ կազմուած կոմիտէն ոտքի տակի հողը կորցնում է: Անգլիացիներն արդէն իմացել են, թէ ում հետ գործ ունեն: Տարակոյս չկայ, որ նրանք աշխատում են ուղղել իրենց սխալ քայլերը: Այդ բանի նշանները արդէն կան. աջարացիների կոմիտէի ներկայացուցչին ընդհանուր նահանգապետը լսեց ուշադրութեամբ: Զանազան տեղերից խնդրագրեր են ստացուած, որ վարչական պաշտօններում նշանակուեն տեղական բնակչութեանը պատկանող յարգելի անձեր: Ընդ.-նահանգապետը խոստացաւ գոհացում տալ այդ խնդրագրերին: Արդէն գոյութիւն ունեցող, «Батумъ» լրագրին աւելացաւ ռուսերէն մի նոր լրագիր, որի 4-րդ երեսը տպուած է անգլիերէն:

Այդ լրագիրը վրացիների դէմ քիչ մաղձ չի թափում: Այս օրերս յայտնի Գիրմանը պատրաստւում է իր խմբագրութիւնը տեղափոխել Քութայիսից Բաթում: Այս օրերս վրացերէն լեզուով կսկսի լոյս տեսնել «Մուսուլմանական Վրաստան» անունով մի լրագիր:

ԹԻՒՐՔԻԱ

ՆՈՐ ԿԱԲԻՆԵՏ

Իզէթ-փաշայի կաբինետը հրաժարական է տուել: Նոր կաբինետի կազմը հետևեալն է. մեծ վեզիր Թաֆիկ փաշա, ներքին գործերի մինիստր—Մուստաֆա-Արիֆ, արդարադատութեան—Հայդար Մոլա, լուսաւորութեան—Ռիզա Թեւֆիկ, զինուորական — Աբդուլլա-փաշա, ծովային—Ռիզա-փաշա, ակւաֆի—Վայանիս:

—

ԱՄՆԻՍՏԻԱ

Մինիստրների խորհուրդը քննել է քաղաքական ընդհանուր ամնիստիա յայտարարելու խնդիրը:

—

ՍԵՆԱՏՈՒՄ

Սենատը ցանկութիւն է յայտնել հրատարակելու բոլոր գաղտնի դաշնագրերը:

Սենատը վճռել է պարզել, թէ որքան մեղաւոր են նախկին կաբինետները պատերազմ ծագելու և նրա աւելորդ երկարաձգման մէջ:

Սենատը որոշել է առաջարկել պարլամենտին՝ դատի յանձնելու նախկին մինիստրներ Էնվէր-փաշային, Թալէաթ փաշային և Ջեմալ փաշային, իբրև այնպիսի անձերի, որոնք պատճառ դարձան Թիւրքիա-

---

Մենք Ձեզ հետ, Նոյ Նիկոլայեւիչ, կարող ենք յիշել Ստոլիպինեան ռեժիմի դումայում արուած պաշտօնական հարցապնդումների օրերը, որ արուած հարցապնդումներից յետոյ, տասնեակ դէպքերի ու երևոյթների առթիւ, նորից նրանք կրկնւում էին աւելի պարզ և լայն:

Մենք այդ բոլորը գիտենք: Բայց մենք մի բան չգիտենք. էլ ինչ գործ ունեն այստեղ դեմոկրատական կարգերը, ինչու համար է դեմոկրատական քաղաքականութիւնը, որը իբր թէ ընդհարուել է Հայաստանի բուրժուական քաղաքականութեան հետ: Բառի բուն նշանակութեամբ ոչ մի կապ: Եւ եթէ, օրինակ, այս բոլորը տեղի ունենային վրացիների նկատմամբ Հայաստանի հանրապետութեան մէջ կամ այլուր, Դուք մեզ հետ կը դատապարտէիք այդ պոլիտիկան, ինչպէս շովինիստական, ցեխի հետ հաւասարեցնող փոքրամասնութիւն կազմող ազգերի իրաւունքները:

Դեռ Հայաստանի և Վրաստանի փոխյարաբերութիւնների բարդութեան առաջին օրերից, մենք գործ դրինք բոլոր միջոցները՝ հարթելու այդ կոնֆլիկտը: Մեզ այդ չյաջողուեց: Պայթեց ռազմի գործողութիւնը և սկսուեցին այստեղ հայերի ձերբակալութիւնները:

Այն ժամանակ ես և իմ բարեկամները յարաբերութեան մէջ մտանք ներքին գործ. մինիստր Րամիշվիլիի հետ: Մենք ցանկութիւն չունենք միջամտելու կառավարութեան կարգադրութեանց մէջ, բայց մենք ցանկանում էինք, պահպանելով պետութեան շահերը, հեռու մղել այն բոլորը, որ չինական պատնէշ էր բարձրացնում երկու ազգերի դեմոկրատիայի միջև:

Մեզ խոստացուած էր ոչ մի արմատական քայլ գործ չդնել առանց լսելու մեր կարծիքը: Բայց, դժբախտաբար, այդ խոստումը մնաց դատարկ ձայն: Դէպքերը աւելի և աւելի բարդացան, մինչև որ հալածանքը ստացաւ ամբողջ ազգութեան դէմ ուղղուած իսկական բնոյթ:

Դրա հետ միասին ստեղծուեց մի այնպիսի մթնոլորտ, որ յօգուտ ձերբակալուածի արուած ամեն մի նոյն իսկ թոյլ քայլ, համարւում էր Դաշնակցութեան կուսակցութեան պաշտպանութիւն:

Այդ կուսակցութեան և ազգութեան միջև դրուած էր հաւասարութեան նշան:

Պէտք է ենթադրել, որ հենց այդ հիման վրայ էլ քարուքանդ են արուել բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները, փակուել է Ազգային Խորհուրդը, որ մինչև այսօր չունի պատասխան: Քարուքանդ են արուած նրա պահեստները և այլն:

Ձգտում էին Ազգային Խորհրդի վրայ ստուեր գցել, կատաղի կերպով մեղադրելով նրան այն բանում, թէ նրա շինութեան մէջ ցուցակագրելիս են եղել ինչ-որ կամաւորներ:

Նոյ Նիկոլայեւիչ. Ձեզ ոչ պակաս չափով քան ինձ լաւ յայտնի է, որ ոչ մի տեղ կամաւորների չեն ցուցակագրել, որ «կամաւորների» ցուցակները այն զինուորական գերիների ցուցակներն են, որոնք վերադարձել էին Աւստրիայից (որոնք Բաթում են վերադառնում և այժմ) և որոնց Ազգային Խորհուրդը դրամ էր հայթայթում և աջակցում նրանց վերադառնալու իրենց բնակավայրերը, անկախ այն բանից, թէ որտեղ են գտնւում այդ վայրերը—Վրաստանում, Ադրբէջանում, թէ Հայաստանում: Այս ամենը յայտնի են:

Սակայն ինչու կառավարութիւնը մինչև այժմ այդ բանը չի յայտարարում: Ինչու նա հրաժարւում է ընդունել այն բանը, որ ինքը թիւրիմացութեան մէջ է ընկել: Ինչու: Միթէ նա շահագրգռուած չէ ճշմարտութիւնը վերականգնելու մէջ: Չէ՞ որ Դուք, Նոյ Նիկոլայեւիչ, մեզ հետ միասին ողջունում էք ճշմարտութիւնը...

Շնորհիւ հպատակութեան օրէնքի անորոշութեան և այն բանի, որ դեռ ևս մի տարի էլ չկայ ինչ մենք բաժանուել ենք և շնորհիւ այլ հանգամանքների, այդ բոլոր ձեռք առած միջոցները, պահպանելու պետութիւնը, յանգել են մի կոդեքսի, որ կատարեալ հալածանքի են ենթարկել հայ ազգաբնակութիւնն ընդհանրապէս, Հայաստանի հպատակ հայերի հետ միասին ձերբակալւում էին նաև Ադրբէջանի և Ռուսաստանի հպատակները:

Միթէ սա հալածանք չէ ուղղուած ամբողջ ազգի դէմ: Բալկանեան պատերազմի ժամանակ ես ականատես էի, թէ ինչպէս Պոլսում սկսուեց հալածանք բուլղարների դէմ: Ձերբակալւում և աքսորւում էին բուլղարներին, ռուսահպատակներին և ընդհանրապէս օտարահպատակներին և մինչև անգամ թիւրքահպատակներին: Այն ժամանակ մենք—սոցիալիստներս—բարձրացրինք մեր բողոքի թոյլ ձայնը:

Իսկ այժմ: Այժմ մեր աչքերի առաջ սոցիալիստական կառավարութիւնը հալածանքի է ենթարկում ամբողջ ազգութիւնը:

Այսպիսով, Հայաստանի և Վրաստանի միջև ծագած պատերազմը և կոնֆլիկտը, շնորհիւ կառավարութեան գործելակերպի, դարձել է հայ-վրացական ընդհարում:

Ներկայ դէպքում պէտք չէ ոչ զարմանալ և ոչ էլ վրդովուել այն բանի համար, որ Վրաստանի մայրաքաղաքի փողոցներում օրը ցերեկով բռնում են, ինչպէս հաւերի, այն մարդկանց, որոնք իրենց գրպանում ունեն հայի անցագիր...

Ես այստեղ կանգ չեմ առնի ուրիշ սահմանափակումների վրայ, որոնց ենթակայ են հայերը: Կը մատնանշեմ միայն մի հանգամանքի վրայ, որ հայ սոց.-դեմոկրատ բանուորները, սոց.-դեմոկրատական կուսակցութեան անդամները նոյնպէս ենթարկւում են նոյն հալածանքներին, իսկ մի քանիսը նրանցից—ó, խայտառակութիւն,—ազատուել են կաշառքով:

Կը մտածէինք մենք արդեօք, որ կապրենք մինչև այսպիսի խայտառակութիւն, երբ սոցիալ-դեմոկրատիան կը խեղդի միւս դեմոկրատիային այն բանի համար, որ նա, իր հարազատը, ապրում է ուրիշ տերրիտորիայի վրայ, որի բուրժուական դասը պատերազմական գործողութիւնների մէջ է:

Մտածէ՞լ ենք երբևիցէ մենք՝ ես և Դուք, Նոյ Նիկոլայեւիչ, որ Ձեր մշակած ծրագիրը ազգային հարցի վերաբերեալ, որի դէմ դուրս եմ եկել, դժբաղդաբար, միմիայն ես—յիշում էք 1917 թուի յունիսը պալատում—կը դառնայ մի այնպիսի բան, որ կը քանդի դեմոկրատիայի միութիւնը, առաջ կը բերի թշնամական գործողութիւններ դեմոկրատիայի հատուածների մէջ: Դուք չէիք մտածում, արդեօք, Նոյ Նիկոլայեւիչ, որ Ձեր ծրագիրը մի քայքայիչ բարիք է լինելու: Ճիշտ է, ես դա չարիք էի համարում, բայց երբէք չէի ենթադրում, որ դա կընդունի այդ աստիճան հրէշաւոր ձևեր:

Մտածե՞լ ենք մենք երբևիցէ՝ ես և Դուք, Նոյ Նիկոլայեւիչ, երբ միասին ձեռք ձեռքի տուած երկար ժամանակ պայքարում էինք յանուն դեմոկրատական սոցիալիստական իդէալի, որ մենք կարող կը լինենք ստեղծել այնպիսի վիճակ, ուր նուազագոյն չափերի կը հասնեն ազգայնականութիւնը սնող պայմանները և որ մեզանից մէկը՝ Դուք՝ կը լինէք կառավարութեան ներկայացուցիչ, իսկ ես՝ կունենամ մի դոկումենտ, որի մէջ սպիտակի վրայ սևով գրուած կը լինի, թէ Ա. Ջամալեանը, որպէս հայ, ձերբակալման ենթակայ չէ:

Որպիսի՛ խայտառակութիւն: Տարիները, ոյժերի և առողջութեան վատնումը թերևս փրկեցին ինձ ձերբակալումից ընդհանրապէս, իսկ ձերբակալումից որպէս հայ ես ապահովուած չեմ, ուստի և ինձ տրուած է թղթի մի կտոր՝ պաշտօնական ստորագրութիւններով և կնիքով:

Որպիսի՛ խայտառակութիւն...

Այդ դոկումենտը, նմանապէս կիրակի օրուանից յետոյ, այրում է իմ ձեռքերը:

Ես չեմ կարող ունենալ այն ինձ մօտ, երբ հայ մասսան բնորոշւում է որպէս յանցաւորների մի ամբոխ, որի հասցէին գոչում են. «Խաչ հան զնա»: Ես այդ անել, ներեցէք, չեմ կարող այն պատճառով, որ, որպիսի կարծիքի էլ լինեն իմ մասին, որպէս էլ որ աշխատելիս լինեն ազատուել ինձանից աքսորի միջոցով (տես «Էրթօբա» № 2), այնուամենայնիւ ոչ ոք չի բացասի իմ մշտական գիծը, որ ես խաղացել և խաղում եմ, այն է՝ լինել ժողովրդական մասսայի հետ: Եւ եթէ այդ մասսան զնդաններն է ուղարկւում, որպէս յանցաւոր, ապա ես չեմ ցանկանում և չեմ կարող բացառութիւն կազմել և պարտք եմ համարում լինել այնտեղ, ուր նա է և բաժանել նրա հետ նրա տանջանքները: Հետևապէս, հրաժեշտ տալով Ձեզ, ես կամենում եմ վերադարձնել Ձեզ ինձ ապահովացնող այդ մի կտոր թուղթը և թախանձագին խնդրում եմ Ձեզ կարգադրել, որ ինձ ձերբակալեն, կամ թէ ոչ դադարեցրէք այդ հալածանքները:

Ես խօսքերի չեմ որ սպասում եմ—նրանք ոչ ոքի պէտքական չեն: Թող լինի ոչ թէ խօսք, այլ գործ, որ պիտի ապացուցէ, որ դեռ ևս ամեն ինչ վերջացած չէ, որ դեռ կարող է գտնուել մեր մէջ ընդհանուր լեզու:

Անկեղծօրէն Ձեզ յարգող՝

Ա. Ջամալեան

յի գլխին պայթած աղէտի։ Այս առաջարկն ընդունուած է առանց առարկութիւնների։

ՉՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԾՈՎԱԿԱԼ ԱՄԵՏԻ ՀԵՏ

Թիւրքական ջրերում գտնուած ֆրանսիական նաւատորմղի հրամանատար ծովակալ Ամետը մամուլի ներկայացուցիչների հետ ունեցած զրուցատրութեան ժամանակ յայտարարել է, որ ֆրանսիական դեսպանատունը մօտիկ օրերս կըվերադառնայ Պոլիս։ Ծովակալի կարծիքով, ամենամօտիկ ժամանակում հաշտութիւն կը կնքուի։ Ծովակալը յոյս է յայտնել նոյնպէս, որ Դաշնակից առևտրական նաւերը շուտով Պոլիս կըգան և շատ ապրանքներ կը բերեն Թիւրքիայի համար։

ՍՈՒԶԱՆԱՒԵՐ ՊՈԼՍՈՒՄ

Պոլսի նաւահանգիստն են մտել Դաշնակիցների մեծ թւով սուզանաւեր։

ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Դաշնակիցների պահանջմամբ Թիւրքաց զինուորական մինիստրութիւնը սկսել է մաքրել սպայական կազմը յանցաւոր տարրերից։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ ՊՈԼՍՈՒՄ

Դաշնակից նաւատորմղի գլխաւոր հրամանատար անգլիական ծովակալ Կալտորնին յանձնարարուած է մինչև հաշտութեան կնքումը մնալ Պոլսում հսկելու համար զինադադարի պայմանների կանոնաւոր կատարմանը։

Ծովակալ Կալտոնին կը նշանակուի Անգլիայի ժամանակաւոր ներկայացուցիչ Պոլսում, իսկ դեսպանի պաշտօնը յանձնուելու է Պոլսի անգլիական դեսպանատան նախկին աւագ թարգման սըր Ադամ Բլոկին։

ԳԵՆԵՐԱԼ ՎԻԼՍՈՆ

Պոլիս է ժամանել անգլիական գեներալ Վիլսոն, որը նշանակուած է Թիւրքիայում գտնուած բոլոր Դաշնակից ուժերի գերագոյն հրամանատար։

ՔՐՈՆԻԿՈՆ

Մոսկուայի Հայկ. Կոմիտէի Վէրայի որբանոցը.— «Ժողովրդի Ձայնի» հինգշաբթի օրուայ համարի քրոնիկոնում ասուած էր, որ Մոսկուայի կոմիտէի որբանոցները գտնւում են շատ անբաւարար վիճակի մէջ։ Բարոյական պարտք ենք համարում յայտնել, որ Մոսկուայի Կոմիտէի Թիֆլիսում Վէրայի որբանոցը, որ գտնւում է տ. Նունէ Դոլուխանեանի ղեկավարութեան տակ, այդ որբանոցը բացառութիւն է կազմում և գտնւում է բաւարար վիճակի մէջ։

◆ **Տեսակցութիւն.**—Երէկ, ցերեկուայ ժամը 12-ին մօտ անգլիական միսիայի ներկայացուցիչը այցելեց վրաց կառավարութեան նախագահ Ն. Ն. Ժորդանիային և ունեցաւ երկարատև զրուցատրութիւն։

◆ **Թիւրքիայի եւ Աւստրօ-Հունգարիայի հպատակների հովանաւորութիւնը.**—Պարսից ընդհանուր հիւպատոսը Կովկասում հաղորդել է Վրաստանի արտաքին գործերի մինիստրին, որ յունուարի 9-ից նա իր վրայ է վերցրել Թիւրքական և և աւստրո-հունգարական հպատակների շահերի պաշտպանութիւնը Վրաստանում։

◆ **Մենաշնորհ.**—Վրաստանի ֆինանսների մինիստրը մօտ ժամանակներս պարլամենտ է մտցնում մի շարք օրինագծեր նաւթի, աղի, գինու, ծխախոտի և այլ մթերքների մենաշնորհ սահմանելու մասին, որը չի կրելու պետական մենաշնորհի, այլ արդիւնաբերութեան համայնացումի բնոյթ։

◆ **Վրաստանի երկաթուղու ծառայողների բարեկեց.**— Երկաթուղային վարչութեան պետ Աբէլովը հրատարակել է մի կարգադրութիւն, որով կրկնում է թէ երկաթուղային գործակալները ամեն առիթով շտապում են վարչութիւն, կայարանները թողնելով անտէր։ Այս առթիւ երկաթուղային վարչութեան պետը յայտնում է, որ ժամանակաւորապէս դադարեցւում է գործակալներին արձակուրդ տալը. դանցառու ծառայողները կարձակուեն պաշտօնից։

◆ **Նոր շաբաթաթերթ.**— Թիֆլիսում լոյս տեսաւ Վրաստանի երկաթուղու ծառայողների միութեան օրգան «Свободный Путь» շաբաթաթերթը, որին աշխատակցելու են Վրաստանի պարլամենտի նախագահ՝ Չխէիձէ, պարլամենտի անդամներ՝ Ի. Ծերեթելի, Ռ. Արսէնիձէ, Ն. Ռամիշւիլի (ներքին գործերի մինիստր), Էրաձէ (աշխատանքի մինիստր), Ն. Էլիաւա (Թիֆլիսի քաղաքագլուխ) և ուրիշներ։ Շաբաթաթերթը բաղկացած է ութ երեսից։

◆ **Մի նոր յատուկ զօրախումբ.**— Թիֆլիսում կարգը պահպանելու և գիշերները պահակ կանգնելու համար ընդհանուր-նահանգապետը Դ. Դաւիդաշւիլուն և Գորդեզիանուն թոյլ է տուել կազմել յատուկ զօրախումբ, որին զէնք տրուելու է կառավարութիւնից։

◆ **Դպրոց Սամտրեդում.**— Վրաստանի երկաթուղու ծառայողների միութեան կենտրոնական կոմիտէն զինուորական մինիստրից խնդրել է, որ Սամտրեդի նախկին երկաթուղային վաշտի շէնքը յատկացնել դպրոցի։

◆ **Կաշառակերութեան համար.**— Թիֆլիսի կայարանապետը կաշառակերութեան համար արձակել է ծառայող Կալանտաձէին։

◆ **Պատերազմից վնասուածների օգտին.** - Վրաստանի երկաթուղու ծառայողները որոշել են պատերազմից վնասուածների օգտին ամսական ռոճիկից յատկացնել 50 տոկոս։

◆ **Զեմստւօ.**—Օնիում (Ռաճայի գաւառ, Քութայիսի նահանգ) տեղի ունեցաւ զեմստւային իրաւասուների առաջին ժողովը, ուր ընտրուել է զեմստւային վարչութիւնը։

◆ **Նպաստ.**—Վրաստանի լուսաւորութեան մինիստրը միջնորդել է կառավարութեան առջև, որ Վրաց Երաժշտական Ընկեր. պետական միջոցներից յատկացնի 75000 ռ.։

◆ **Հրահանգ.**— Վրաստանի երկաթուղու պետը հրահանգել է բոլոր կայարանապետներին որ նրանք միջոցներ ձեռք առնեն վագոնների կտուրներին երթևեկողներին արգելելու համար։ Հրահանգում յիշւում է այն մասին, որ նոյնիսկ մասնաւոր արգելքից թոյլատրւում է երթևեկել զինուորական գնացքներով։

◆ **Կողոպուտ.**—Յունուարի 9-ին, ցերեկուայ ժամը 3-ին մի քանի չարագործներ մտան բժշկա-սանիտարական բաժանմունքի վարիչ Պոլումորդւինովի բնակարանը և տարան 68,000 ռ. պետական գումար և 100 ռ. սեփական։

◆ **Հայ-վրացական կոնֆերանս.** Յունուարի 9-ին Թիֆլիսում անգլիական մի սպայի նախագահութեամբ բացուեց հայ-վրացական կոնֆերանսը, որը զբաղւում է սահմանային վէճով և այլ մի քանի կարևոր խնդիրներով։

◆ **Ձերբակալուած հայերի մասին.** Թիֆլիսի ընդհանուր նահանգապետի կարգադրութեամբ՝ Քութայիսի նահանգական բանտից ազատուելու են Վրաստանի, Ադրբէջանի և Պարսկաստանի հպատակ հայեր։

◆ **Երկաթուղային կայարանների ցուցանակները.**— Բաթումից Թիֆլիս եկողները հաղորդում են, որ երկաթուղային այն կայարաններում, ուր ռուսերէնի փոխարէն փակցրուած էին տաճկական ցուցանակներ, անգլիացիներ կարգադրութեամբ փոխարինուել են նորից ռուսերէնով։

◆ **Գնացք Ալեքսանդրապոլից.**— Յունուարի 9-ին Ալեքսանդրապոլից Թիֆլիս եկաւ մի գնացք անգլիացիների ներկայացուցիչներով։ Նոյն գնացքով եկել են նաև մի քանի ուղևորներ։

◆ Թիֆլիսի մանկավարժական խմբակի ձեռնարկութեամբ կիրակի, ամսոյս 12-ին, ժամը 12-ին Ցոփանեան օր. դպրոցի դահլիճում տեղի կունենայ հանդէս, որտեղ բժիշկ պ. Վ. Մարգարեանը կը դասախօսէ «Հոգու և մարմնի առողջապահութիւն» նիւթի մասին։

ՎՐԱՍՏԱՆ

—oo—

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏ

Յունուարի 4-ի նիստի շարունակութիւնը

—

Ամբիոն է բարձրանում Իր. Ծերեթելի սոցիալ - դեմոկրատների բուռն ծափերի տարափի տակ։

Ծերեթելին իւր ճառն սկսում է մատնանշելով այն խոր նշանակութիւնը, որ ունին հայ-վրացական պատերազմը և նրա հետևանքները անկախ Վրաստանի ապագայ քաղաքական գիծը որոշելու և աւելի ևս շեշտելու համար, կապելով այն կառավարութեան վարած քաղաքական գծի գնահատման հետ պատերազմի ժամանակ և նրանից առաջ։ Մեզ համար պարզ է, ասում է նա, որ այս պատերազմը մղւում էր երկու ճանապարհով. ռազմական ճակատամարտների հետ միասին տեղի էին ունենում նաև դիւանագիտական ընդհարումներ։ Առարկելով այն հռետորներին, որոնք վրաց զօրքերի յաղթութեան վրայ այն աչքով չեն նայում, ինչպէս սոցիալ-դեմոկրատները, Ծերեթելին պնդում է, որ Երևանի կառավարութեան զօրքերը երես առ երես հանդիպելով հանրապետական Վրաստանի զօրքերին և ժողովրդական գւարդիային՝ սոսկալի պարտութիւն են կրել և այդ տեսակէտից բոլորովին աւելորդ է վրաց կառավարութեանը մեղադրել, թէ նա չափազանց մեծ ուշադրութիւն է դարձրել հաշտութեան բանակցութիւնների վրայ և զանցառու է գտնուել ռազմական ուժերի կազմակերպութեան մէջ։ Չի կարելի վրաց կառավարութեանը մեղադրել խաղաղարար քաղաքականութեան համար, որ յամենայն դէպս արգելք չէ եղել նրան յաղթութիւն տանելու պատերազմի դաշտում այն թշնամու վրայ, որ վարուելով վրաց նացիոնալ - դեմոկրատների յանձնարարած խորհուրդներով, այսինքն՝ վարելով պատերազմական նախապատրաստութիւնների քաղաքականութիւնը և հեռու պահելով իրեն հարևանների հետ փոխադարձ համերաշխութիւնից, ոչ թէ յաղթութիւն շնորհեց իր ազգին, այլ մեծ պարտութիւն։

Ի՞նչ է պատճառը, որ վրաց կանոնաւոր զօրքը և ժողովրդական գւարդիան ջարդեցին Երևանի կառավարութեան զօրքերին։ Գուցէ կասեն, թէ Հայաստանի դրութիւնը անհամեմատ աւելի աննպաստ էր, քան թէ Վրաստանինը և դրանից է օգտուել վրաց կառավարութիւնը։ Բայց Երևանի և Վրաստանի այժմեան դրութիւնը պատահականութեան արդիւնք չէ, այլ հետևանք է այն քաղաքականութեան, որ վարում են Վրաստանում վրացական իշխող կուսակցութիւնն ու կառավարութիւնը, իսկ Հայաստանում՝ հայկական իշխող կուսակցութիւնն ու կառավարութիւնը (ծափահարութիւններ ձախ թևում)։ Վրացիների յաղթութիւնը հետևանք չէ նաև տեխնիկայի և ստրատեգիական առաւելութիւնների, այլ և բարոյական հասկացողութիւնների ամրութեան։ «Մեր ժողովրդական գւարդիան, մեր զօրքը, որի մեծամասնութիւնը մեր դեմոկրատներից են, ոչ միայն զինուորական, այլ նաև բարոյական տեսակէտից աւելի բարձր գտնուեցին, քան այն զօրքերը, այն հրոսակախմբերը, որ ուղարկուած էին Վրաստանի հանրապետութեան դէմ»։ Վրաց զօրքը համոզուած էր, որ կռւում է միայն հայրենիքի պաշտպանութեան համար և մեր կառավարութիւնը երբեք սուր չէր բարձրացնի, եթէ հայրենիքը վտանգի մէջ չլինէր։ Իսկ երևանում, ուր միշտ հետևել են այլ քաղաքականութեան, ոչ միայն երկիրն աւելի անկանոն վիճակի մէջ երևաց, այլ և նրա զօրքերը բարոյական տեսակէտից շատ աւելի ստոր դրութեան մէջ էին, քան մերոնք։ Բոլշևիկեան ոգեւորութիւն կարող էր լինել նաև մեր հակառակորդների մէջ, բայց մեր զօրքը կռւում էր այն հաստատուն գիտակցութեամբ, թէ հայրենիքն ու դեմոկրատիան մեծ վտանգի մէջ են և ով որ դեմոկրատիային է ծառայում, պէտք է իրեն զոհ բերի հայրենիքի պաշտպանութեան համար։

Այստեղ ասուեց, շարունակում է Ծերեթելին, թէ չնայելով յաղթութեանը մենք մեծ զոհեր ենք տուել և այդ զոհերի պատճառը համարուեցին այն բանակցութիւնները, որ վարում էր արտ. գործ. մինիստրը կոնֆերենցիայի մասին։ Դա քաղաքական կռուի լոյեալ միջոց չէ։ Այո, կորուստներ ունեցել ենք, որովհետև ոչ մի պետութիւն ապահովուած չէ անակնկալ, դաւաճանական յարձակումից իր սահմանապահ զինուորների վրայ, ինչքան էլ գերազանց յատկութիւններով օժտուած լինի նրա դիպլոմատիան։ Բայց մի տարբերութիւն կայ մեր զոհերի և Երևանի զոհերի մէջ։ Ոչ միայն նրանց զոհերի քանակն աւելի է մերից, այլ մեր կողմից ի զուր տեղը չէ թափուած ոչ մի կաթիլ արիւն. մեր հերոսների արիւնը թափուել է հայրենիքի պաշտպանութեան համար և ամրապնդել է մեր ապագայի հիմունքները (ծափեր ս.-դ. և ս.-ֆեդ.-երի), իսկ նրանց զոհերը յաւիտեան աններելի են, որովհետև բերուած են ոչ թէ ժողովրդի բարիքի, այլ ժողովրդական գործի խորտակման և ոչնչացման համար։ Այս է տարբերութիւնը և ով որ այս չի հասկանում և այս ձևով եղած զոհաբերութիւնը ի զուր համարելով ուզում է ծառայեցնել կուսակցական պրոպագանդայի և նպատակների համար, այդպիսին չէ շահագրգռուած պետութեամբ և լաւ չի ըմբռնում հայրենիքի իսկական ծառայութիւնը։

Կայ և մի ուրիշ աւելի նշանակալից և բարդ խնդիր։ Մենք ռազմական ընդհարումների մէջ յաղթող հանդիսացանք։ Բայց հարց է առաջ գալիս. մեր դիւանագիտութիւնը, մեր միջազգային քաղաքականութիւնը և այս տեսակէտից նաև մեր վերաբերմունքը Հայաստանի հետ նպաստեցի՞ն մեր յաղթութեանը և մեր երկրի դրութեան ամրապնդմանը։ Այդ մի մեծ հարց է։ Այս պատերազմի գնահատութեան ժամանակ այդ հարցը իր ամբողջութեամբ կանգնում է մեր առաջ։

Երբ որ Երևանի կառավարութիւնը սկսեց այս պատերազմը մեր դէմ, նա չէր յենւում միայն զէնքի և զինուորական ուժերի վրայ, այլ նա ձգտում էր մեկուսացնել Վրաստանի հանրապետութիւնը և նրա դէմ հանել ոչ միայն իր զօրքերը, այլ և արտաքին, աւելի զօրեղ ուժ։ Շատերը շեշտեցին այն հանգամանքը որ Հայաստանի կառավարութիւնը մեր դէմ դուրս եկաւ յատկապէս այնպիսի ժամանակ և այնպիսի հաշուով, որ հնարաւորութիւն ունենայ մեր դէմ օգտագործելու արտաքին ուժը։

Մի բանի վրայ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել—մեր կառավարութեան այժմեան դիւանագիտութիւնը միայն այդ դէպքում կարող էր պտուղ բերել, եթէ մեր նախկին արտաքին քաղաքականութիւնը հնարաւորութիւն տար։ Երևանի կառավարութիւնը մեր դէմ գործում էր հենց այն մտքով, որ այստեղ եկած արտաքին ուժերին ներշնչէ մեր նախկին արտաքին քաղաքականութեան մասին թիւր ըմբռնում, առաջ բերէ այդ արտաքին ուժի մէջ մեր վերաբերութեամբ անվստահութիւն և թշնամական յարաբերութիւն։ Իր ամբողջ մամուլի և բոլոր ներկայացուցիչների միջոցով Երևանի կառավարութիւնը համոզում էր մեզ մօտ եկող արտաքին ուժերին, թէ նրանք յանձին մեր գործ ունին Գերմանիայի դաշնակիցների հետ։

Եթէ Երևանի կառավարութիւնը վաստակէր այս գլխաւոր ճակատամարտը, եթէ նա կարողանար համոզել արտաքին ուժերին, ես ձեզ հաւատացնում եմ, որ ոչ մի հանճարեղ դիւանագէտ այժմ չէր կարողանայ մեր երկիրը փրկել սոսկալի վտանգից։ Վեց ամիս առաջ էլ այս նոյն կառավարութիւնից միևնոյն օպպոզիցիան պահանջում էր մեր երկրի բախտը կապել երկու կռւող իմպերիալիստական կողմից մէկի՝ Գերմանիայի հետ, դրա մէջ տեսնելով մեր ժողովրդի փրկութիւնը, բայց այն ժամանակ կառավարութիւնը յայտնեց, որ այս իմպերիալիստական պատերազմի մէջ այդպիսի դաշնակցութիւն կընքելը կողմերից մէկի հետ, վտանգի կենթարկէ մեր հայրենիքը՝ նրա վիճակը կապելով պատերազմի բաղդի տատանումների հետ։

Այն, ինչ որ ասում էին մի ժամանակ կառավարութեան հակառակորդները Գերմանիայի հետ դաշնակցելու մասին, նրա վրայ են պնդում և իրենց գլխաւոր յարձակումը յենում այժմ դաշնակցականները։ Նրանք հաւատացնում են այստեղ եկած արտաքին ուժերին, թէ «Դուք գործ ունիք մի այնպիսի ժողովրդի հետ, որ ձեր թշնամիների բանակում էր և կապուած էր նրա հետ այն ժամանակ, երբ որ դուք դեռ ես դժուարութիւնների մէջ էիք գտնւում»։ Այս էին աշխատում հաւատացնել եկած ուժերին դաշնակցական դիւանագէտները, բայց նրանց այդ յարձակումն էլ պարտութեան փոխուեց և նրանք կորցրին ճակատամարտը, որովհետև նրանց անհիմն տեղեկութիւնների և սուտ դիւանագիտութեան դէմ մենք կարողացանք դնել ճշմարիտ, հիմնաւոր և անվիճելի փաստեր։

Մենք կարողացանք մեր ժողովրդին ազատել առանձին խմբակների սխալ, աւանտիւրիստական քայլերի պատասխանատուութիւնից, որին եթէ մասնակից համարուէր մեր ժողովուրդը, դառն վիճակ կը սպասէր նրան։

(Վերջը միւս անգամ)

ՎՐԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

«Էրթոբան» (№ 4) 300-ըդ վերստի հայ փախստականներին Վրաստանի սահմաններից հեռացնելու՝ կառավարութեան կարգադրութեան առթիւ գրում է հետևեալը.

«Տարակոյս չկայ, որ այս կարգադրութեան մասին տարբեր կերպով կարտայայտուեն երկու կողմից։ Վրացի շովինիստները, որոնք տոգորուած են աղմուկ և խառնակութիւն առաջ բերելու ցանկութեամբ, պետութեան այս խելացի ակտի մէջ կը տեսնեն միայն գրգռում հայերի դէմ։

Դաշնակցութիւն կուսակցութիւնը և նրան հետևող մեր նախկին ընկերները աշխարհը կը լցնեն աղաղակներով Վրաստանի կառավարութեան չափազանց անտանելիութեան մասին։

Մենք աւելորդ ենք համարում այսպիսի պարոնների հետ զրոյց անել, որովհետև, ինչպէս ժողովուրդն է ասում, «կուզիկին (սապատաւոր) միայն գերեզմանը կուղղէ»։ Մեր թշնամիների ցանկութիւնն էլ հենց այն է, որ մեր դեմոկրատիական կարգուկանոնների տակ փոս փորեն և նրա աւերակների վրայ հաստատեն իրենց կորցրած իշխանութիւնը։

Բայց չնայած երկու ազգութեան շովինիստների տենչերին, մենք յոյս ունենք, որ Վրաստանի դեմոկրատիան չի բռնուի պրովոկատորական ուղղով և կը հասկանայ վերոյիշեալ կարգադրութեան իսկական միտքն ու նշանակութիւնը։

Մենք իր ժամանակին առաջինը դուրս եկանք ընդդէմ մեր նացիոնալիստների, երբ նրանք պահանջում էին փակել Վրաստանի սահմանները հայ փախստականների առաջ, որովհետև հայ փախստականների համար այլևս ուրիշ ճանապարհ չկար։ Բայց նրանցից յետոյ շատ բան փոխուեց։ Երևաց, որ Հայաստանը չի քաշւում ծախսերից, որպէսզի մեր հանրապետութեան վրայ անմիտ յարձակումն պատրաստէ, Հայաստանի ունեւոր դասակարգերը միլիոններով փող են ծախսում դինամիտ և այլ միջոցներ ձեռք բերելու մեր կամուրջները քանդեցնելու նպատակով. միևնոյն հարուստ հայերը, չեն խնայում ոչ մի միջոց, որպէսզի Թիֆլիսում և Վրաստանի սահմաններում էլ դուրս հրատարակեն լրագիրներ և ամսագրիներ՝ մեր դէմ ագիտացիա անելու համար, և միևնոյն ժամանակ Հայաստանի հպատակները փախստականների դիմակով սփռուել են մեր գիւղերում և քաղաքներում, հաւաքում են մեծ քանակութեամբ պաշար, տարածում են տարափոխիկ հիւանդութիւններ, և նրանցից ոմանք էլ քարոզում են [illegible] գաղափարներ [illegible] զինւում են [illegible]։ [illegible] է թոյլ [illegible] դրութիւն. մենք առանց այն էլ քիչ ունենք պաշարեղէն, մեր գանձարանը մեր պետական պահանջներին էլ դժուարութեամբ է բաւարարում և այս ժամանակ մեր տերրիտորիայի հազարաւոր փախստականներին թողնելը կը թեթևացնէր Երևանի կառավարութեան բեռը. ուրիշ ժամանակ մենք սրա վրայ ուշադրութիւն չէինք դարձնում։ Հարևաններին չէինք զլանում օգնութիւն տալ։ Բայց այսօր Երևանի կառավարութիւնն ինքը պէտք է պահէ իր փախստականներին, որովհետև ինքն այնքան զօրեղացել է, որ պատերազմ էլ է յայտարարում և որա համար էլ ոչ մի միջոցից չի քաշւում։

Բայց միւս կողմից, մեր շովինիստները չպիտի մոռանան, որ կառավարութեան ձեռնարկած միջոցները հայ ազգի դէմ չեն ուղղուած և ձեռք վերցնեն մարդատեացութեան քարոզներից։

Իսկ մեր ժողովուրդը, որ այսպիսի զարմանալի երկայնամտութիւն և համբերութիւն ցոյց տուեց փախստականների վերաբերեալ՝ պէտք է աջակցէ կառավարութեան գործակալներին, որպէսզի այս օգտակար գործը կազմակերպուած ձևով կատարուի և որև է թիւրիմացութիւններին ու էքսցեսներին տեղիք չտրուի»։

«Ո՜Վ, ՍՈՒՐԲ ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ»

Կիրակի, շուրջկալների և ձերբակալութիւնների ժամանակ, դանազան փողոցներում մարդկանց չորս մեծ խմբեր տեսայ, որոնց քշում տանում էին։ Տեսարանը վրդովեցուցիչ էր։ Վորոնցովի արձանի մօտ մի մեծ խումբ անցկացրին զինուած միլիցիոնները, որոնցից ամեն մէկը առիթ էր դարձել։ Վրացիների կողմից ոչ մի վրդովմունք։ Դրան կից մի տեսարան ևս տեսայ։ Մի պառաւ կին, երևում է վրացի, մէջքից կռացած, տեսնելով այս աւարի նման քշուող մարդկանց խումբը և նրան քշողներին, ինքն իրեն, լսելի ձայնով, ասում էր.

«Սաղղա միգդաւթ. աքվէ դախոցէթ. գաժլիտէթ էգ գասածղվլեբի» (էլ ուր էք տանում. այստեղ նեթ կոտորեցէք, ջնջեցէք էդ անիրաւներին)։

Յիշեցի Յովան Հուսին. երբ նրան խարոյկի վրայ բարձրացրին, մինչ նա այրւում էր, տեսնում է, թէ ինչպէս մի պառաւ կին շատ ցախ է բերում արագացնելու «ամենամաքաւոր» մարդու մահը. Յովան Հուսը խարոյկից բացականչեց։

«Ո՜վ, Սուրբ Անմեղութիւն»։

Տէր-Խաչիկ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի
գրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
■ ■ ՁԵՄՍՏՒՈՆ ■ ■
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Գինը 50 կոպէկ։
Դիմել գրասենեակ՝ Головинскій пр. № 25. 10—4

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑ
ԵՒ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան։
Նիկոլայեւսկի № 36. ◆ Կիսամեայ դպրոցի վճարը 75 ռուբ. ◆ Ուսանողների 25 տոկ. ձրի է։ 0—5

Տպարան „Մամուլ" (կապալ. «Կոնկուրենտ Ընկ.»), Լօրիս-Մելիքեան № 22.